

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

Պ-156-18.10.2017-ՏՏԳԲ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

**«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337-Ն օրենքի 30-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 30. Համայնքի ղեկավարի տեղակալը

1. Համայնքի ղեկավարը կարող է ունենալ տեղակալներ:
2. Համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնը հայեցողական պաշտոն է:
3. Համայնքի ղեկավարների տեղակալներին պաշտոնի նշանակում եւ պաշտոնից ազատում է համայնքի ղեկավարը:
4. Համայնքի ղեկավարի տեղակալներն իրականացնում են համայնքապետարանի աշխատակազմի կանոնադրությամբ իրենց վերապահված գործառույթները:
5. Համայնքի ղեկավարի հանձնարարությամբ տեղակալներից մեկը փոխարինում է համապատասխան համայնքի ղեկավարին վերջինիս բացակայության ժամանակ:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: